

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՆԵՐԿԱՅ ԿԸ ԳՏՆՈՒԻ
«ԲԱՐԵԿԱՍՈՒԹԻՒՆ» INTERNATIONAL DANCE STUDIO-Ի
ՏԱՍՆԱՄԵԱԿԻ ԵԼՈՅԹԻՆ

Կիրակի, Յունիս 20ին տեղի ունեցավ «Բարեկամութիւն» International Dance Studio-ի տասնամեակի ելոյթը, որուն ներկայ գնտուեցաւ Առաջնորդ Սրբազան Հայրը՝ ընկերակցութեամբ Արժ. Տ. Խաժակ Քինյ. Շահպազեանի եւ անձամբ շնորհաւորեց պարախումբի ղեկավարներ՝ Տէր եւ Տիկին Արսէն Օհանեանը եւ Լուսինէ Գէորգեանը: Այս առթիւ տպուած գրքոյկին մէջ Սրբազան Հայրը իր շնորհաւորական պատգամին մէջ կ'ըսէր. «Չափազանց գնահատելի է, որ Հայրենիքէն հեռու, Ամերիկայի այս հիւրընկալ ափերուն, ուր բազմաթիւ լեզուներ կը խօսուին եւ զանազան մշակոյթներ կը զարգանան եւ կը տարածուին, «Բարեկամութիւն» International Dance Studio-ն՝ շնորհիւ անձնուէր հիմնադիրներուն, իրենց ազգանուէր ծառայութիւնները կը ծաւալեն հայ երաժշտութիւնն ու աւանդական պարերը պահպանելու, ուսուցանելու եւ մեր մատաղ սերունդին միտքն ու հոգին լուսաւորելու բարձր մակարդակի պարարուեստով եւ երաժշտութեամբ:

Վստահ ենք, պարախումբի տասնամեակի տօնախմբութիւնը գեղեցիկ առիթ մը պիտի ըլլայ արուեստասէր մեր հայորդիներուն համար, որոնք ընկերային ջերմ եւ սիրալիւր մթնոլորտի մէջ պիտի վայելեն մեր փոքրիկներուն, պատանիներուն եւ երիտասարդներուն տաղանդաւոր պարերը եւ պիտի գնահատեն Տնօրէնն ու պարուսոյցները, որոնք իրենց թանկագին ժամանակը եւ արուեստի բարձր կարողութիւնները տրամադրած են յաջողութեամբ պսակելու համար տասնամեակի հանդիսութիւնը»: